Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
նոյեմբերի 8 -ի N 808 - Ա
որոշման

«ԿԱՆԱՆՑ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ ԲԵՌՆԱՐԿՂԻ ԳՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Տիչինայի փող., 3-րդ նրբ., 2 հաս-ցեում գտնվող «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության համար նախատեսված բեռնարկղի գնում: Բեռնարկղը օգտագործվելու է որպես պահեստ՝ այլ բարեգործա-կան կազմակերպություններից ստացված հագուստ-ները պահեստավորելու և այնուհետև կարիքավոր կանանց անհատույց նվիրաբերելու նպատակով:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	անհատ բարերարներ /իրավաբանական և ֆիզիկական անձինք
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղ. Երեւան, Մարշալ Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երեւան, Տիչինայի փող., 3-րդ նրբ., տ. 2, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1,100,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Նախատեսվում է ծրագիրն իրականացնել 2019 թ. հոկտեմբերի 23-ից մինչև 2019 թ. նոյեմբերի 25-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից 2019 թ. հոկտեմբերի 23-ից մինչև 2019 թ. նոյեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում ծրագիրը բարեգործական որակվելուց հետո նախատեսվում է «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության համար գնել բեռնարկղ: Արժեքը՝ 1,100,000 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Էկո Ֆրեշ Մաշրուումս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի N 1 հավելվածի համաձայն պայմանագրի արժեքը կազմում է 1.100.000,00 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարե-գործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղե-կություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ